

# ՊԱՏԿԵՐ

ՀԱՆԴԻՍ ԿԻՍԱՄՍԵԱՅ



Ա. Ռ. Ա. ԶԻՒ ՏԱՐԻ, Թիկ 16

1 Գեկենիքեր 1890



ԿՈՍՏԱՆԴՆՈՒԹՈՒՆԻՍ

ՏՊԱՐԱՆ

ԳԱՐԵԳԻՆ ՊԱՆՏԱՍԼԵԱՆ

Փողոց Առաջան Համամ, Թիւ 14

1890

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ



1. ՀԱՌ ՊԱՄԲԱՆԱԿԱՆ Ի սգայի մահ Գերապատիւ Յովկի Աւրդապետի Գրմըգեան : — (Շարայարութիւնն լւ վերջ) : — Դեռոք Վարդապետ Թէրզիպսշեան :
2. ՊԱՇՏՈՆԱԳԻՐ Առաքեալ ի դիմաց Արդարութեան եւ Կրօնից Նախարարութեան առ Պատրիարքարան Յունաց՝ Պատրիարքական առանձնաւորհմանց խնդրոյ մասին :
3. ՅՈՒՆԱԿԱՆ ԳՈԲԾԵՐ : — Պահօնագիր Բ. Դրան :
4. ՀԱՆՐԱԳԻՐ ՀԱՅ ԵՐԵՒԵԼԵՍՅ ԱՌ ՎԵՀ. ՍՈՒԼԹԱՆՆ :
5. ԴԵՐՄԱՆԱԿԱՆ ԲՈՂՈՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՎԻՃԱԿԻ : — Յովհաննես Վարդ սպետ Բաղադեան :
6. ՄԱՆՐԱԼՈՒՐՔ Նոր եւ անլուր վարդապետութիւն մի : — Բողոքականութիւնն ի Հնդիկս :

# ՊԱՏԿԵՍ

## ՀԱՆԴԵՍ ԿԻՍԱՄՄԵԱՅ

Առաջին Տարի

ԹՎԻ 16

1 Դեկտեմբեր 1890

ՃԱՌ ԴԱՄԲԱՆԱԿԱՆ (1)

Ի ՍԳԱԼԻ ՄՈՅ

ԳԵՐԱՊԱՏԻՒ ՅՈՎՍԷՓ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԳՐՄԸՉԵԱՆ

—————\*

( Ծարայարութիւն և վերջ )

Երկնաւոր ձայն մը հնչեց իր ականջներուն : Աստուածային կոչումն էր որ վերնագոյն մեծաւորաց բերնով կը յայտնուէր : « Ե'լ, ըստ այդ ձայնն, Ե'լ եւ գնա՛ յառաքելութիւն : թ'ող ինչ որ ունիս, սպատիւ, փառք, հանգիստ, սիրելիք . հո՛ն սիտի փառաւորեմ քու տնունդ, ինչպէս փառաւորեցի զանոնք որ զիս սիրեցին » . « Ե'լ դու յերկրէ քումմէ . . . եւ գնա՛ յերկիրն զոր ցուցից քեզ . արարից զքեզ յազդ մեծ եւ փառաւորեցից զանուն քո » ( Ծննդ . ԺԲ . 1 ) : Արբահամին եղած հրաւէրն էր . երթալ տեղ մը որ անծանօթ էր իրեն, երթալ տեղ մը՝ ուր հակառակ տարրը զօրաւոր էր, տեղ մը՝ ուր ամենայն ինչ մաքաւմամբ եւ վշտօք յառաջ կ'երթար . նոյն իսկ ամենուստեք սպասնալիք Առաքեալն կենաց : Նորա արիւթիւնն եւ առաքելական անվեհեր քաջասրտութիւնն դժուարակնձիւն խոչընդուներէն

(1) Տես Պատկեր երես 337 :

աւելի մեծ եղաւ . աշխարհային տկար , մեզկ եւ մարդասէր ոգին միանգամը ընդ միշտ իւր սրտէն արտաքսեալ , այլ եւս չկրցաւ տնդր մուտ ունենալ : « Դիտե՛մ ըստ ինքնիրեն , գիտե՛մ յո հաւատացեալն եմ . հաստատեալ եմ թէ կարող է զաւանդն իմ պահելյօրն յայն » (Բ . Տիմ . Ա . 11) : Ուստի իւր եղաւ նաեւ Արբահամու հլու եւ վեհանձն հնագանդութիւնը . այնպէս զի՞ ցոյց տալով իր անդանդաղ պատրաստականութիւնը , մինչեւ իսկ կը համորձակէր գրել բարեկամի մը . « Ոչինչ զգացուցի մարմար եւ արեան » (Գալ . Ա . 16) : Իւր եղաւ կենդանի հաւատքը (Հռովիմ . Դ . Երր . ԺԱ) : Որով յուսաց եւ զգաց ապագայ փառաւորութեան նախաճաշակը . եւ սիրահարեալ գնաց , վագեց , թռա՛ւ միւս այլ Քառերեանի ոգւով եռալով :

« Իբրե՛ւ զի գեղեցիկ են ի վերայ լերանց ոտք աւետարանչի համբաւոյն խաղաղութեան , իբրեւ ուեւտարանչի բարութեանց » (Ես . Ծ . 7 Բ . Հռովիմ Ժ . 15) : Այն քաղաքն որ մինչեւ ցայնժամ նստեր էր գրեթէ ի ստուերս մահու , եւ հիմայ նոր ի նորոյ եռանդուն քահանայից ջանիւք սկսած էր արդարութեան արեգական լըսը տեսնել , ընդունեցաւ զՅովսէփ Վ . Գրմըզեան իբրեւ զիրեշտակ Աստուծոյ : Զի նա կու գար լի Հռովով տւետարաննել աղքատաց և բժշկել սրտարեկ թշուառներն , հոգւով գերիներու թողութիւնն քարոզել եւ մտօք կուրաց տեսութիւն : Այո՛ , քիչ աշխատեցաւ հոն , երեք տարի միայն . բայց աշխատանց արդիւնքը ժամանակով չչափուիր . եռանդն է որ տմենայն ինչ կը յեղափոխէ , որ կը վասէ սրտերն , կը համոզէ մոռքերն . որ կրքերն կը փշրէ եւ ապառաժ կուրծքերէն աղբիւր կը ցայտեցնէ արտասուաց . որ տմենայն ինչ կ'ոգեւորէ եւ կը յարդարէ երկնից համար կրեշտակներ : Եւ ո՞վ կարուլ է ուրանալ անոր համեմատարար մեծադործութիւններն , զորս մարդկային տեսակէտով հնար է պախարակեցինք . ո՞վ կարող է թուարկել կամ նկարագրել քաշած աշխատանքներն , հանդուրժած զրկումներն , թափած քրտինքն , հատցուցածայնն , լիուլի զոհողութիւնն : Ամենայն ինչ մոռցաւ նա . տմենայն ինչ որ նիւթական էր եւ աշխարհային՝ տնհետ եղաւ իւր աշաց առջեւ : Ա՛լ իբեն համար ուրիշ տեղ , ուրիշ հորիզոն , ուրիշ գաւառ չմնաց . բոլոր տիեզերք ի մի միայն եօղլատ կեղբանացաւ , որ իր գործն եղաւ , իբենն եղաւ .

ժողովրդեան ամեն մէկն իրեն զաւակն էր . զինքն կը նկատէր նա իրեւ հայր՝ մեծ բացց կարօտ մի ընտանեաց . այս ընտանեաց անդամներն իրեն սիրելիքն էին ու անձկալիք , անոնք իւր ուրսխութիւն ու պասկ . բալոր իւր մէրն , գոյքն , էութիւնն անոնց զոհեց . անմտհ էջ մը պիտի զարդարէ այն առաքելութեան սրամութեանը մէջ : Քանզի իրաւամի կը քաւ Պօղոս Առաքելոյն հետ անոնց այս սրբազնն խօսքերն ուղղել . « Դուք գիտէք , եղարք , զի մեր առ ձեզ գալուառը ընդունայն չեղաւ . որովհետեւ առջի բերան չարչարուեցմիք ու թշնամանուեցանք . այլ մէք մարդիկներուն հաճոյ ըլլալու համար չխօսեցանք Աւետարանը , հապա միայն Սատուծոյ՝ որ սրտերը կը քննէ : Մեք մարդիկներէն փառք չփնտուեցինք , ո՛չ ձեզմէ եւ ոչ ուրիշներէն . ձեր մէջ հեղութեամի կենցաղավարեցանք , ինչպէս գայեակ մը որ կը ննուցանէ մանկունքը . Զեզի Աստուծոյ Աւետարանին հետ մեր խմանածք առալ համայ եղաւ մեզ . որովհետեւ մեր սիրելիներն եղաք , կը յիշէք , « Եղաւ'րք : մեր վաստակն ու ջանքը , զի գիշեր ու ցերեկ կը գործէինք եւ կը քարոզէինք Զեզ Աստուծոյ Աւետարանը : Դուք ինքնին կը վկայէք եւ Սատուծո , թէ ինչպիսի՝ սրբութեամք եւ արդարութեամիր եւ ամրացութեամի մնայինք ձեր մէջ . որովհետեւ ձեզմէ իւրաքանչիւրը ինչպէս հայր մը իր որդիքը՝ այնպէս կը միտիթուրէինք . . . քանզի ո՞վ է մեր յոյս կամ ինդութիւն կամ պատկ պարծանաց մերոց՝ եթէ ոչ դուք ի Տէր , առաջի Տետոն մերոց Յիսուսի Քրիստոսի , ի նորա գալստեանն» : (Ա . Թէս . Բ .) Այս , ի նորա գալստեանն :

Այս հրաժեշտի ողջոյնն է . « Եհաս ժամ զի վասուաւարեսցի որդի մարդոյ » (Յովի . ԺԲ . 23) : Պատրաստ է այլ եւս , Տէ՛ր , պատրաստ է անոր սիրաը . ե՛կ երբ կ'ուզես . ե՛կ դիշերայն եւ յանկարծ . քու կամքդ ըլլայ . միայն թէ « Փառտուրեա՛ զնո տու ի քէն փառօքն » (Յովի . Ժէ . 5) : Ամենակալ պատկիչ սրբոց , տուր այս արդարոյս արդարութեան պատկը . զի բարւոք պատերազմը պատերազմեցաւ . ընթացքը կատարեց . հաւատքը պահեց (Բ . Տիմ . Դ . 7) : Պատասխանեց Ամենակալն եւ կ'ըսէ . « Հեղեղներէն պիտի խմէ ճամբուն վրայ . անոր համար պիտի բարձրացնէ գլուխը » . պէտք է որ չարչարուի , վշրուի եւ ճըմլուի . . . — Ապա ո՞ւր է Տէր քու անծայրածիր եւ ան-

սպառ գթութիւնդ . ողջոյն ստեղծուածոյ մեծ դիրքն ի մանկութենէ հետէ խօսեցաւ ինձ եւ ըսաւ , թէ Դու՝ ամենագութ ես . հարցուցի վայրի գազանաց , որ ահեղ բարբառով կը խօսեցնեն անտառներն . եւ ըսին , թէ՝ համայնից Տէրն այնչափ գթած է , մինչեւ իրենց վորոտիչ ձագերուն սնունդ կու տայ . հարցուցի ծովուն ալեաց , եւ ըսին , թէ՝ անոր բարութեամբ կը կայստեն իւր ձկունք , եւ նորա չնչով կը վաղեն նաւք . հարցուցի աստեղաց եւ գոչեցին մեծաճյն . «Մարդոյն համար գրաւ զմեղ մթոյն անշէջ զամբարք » : Հարցուցի ամպոյ եւ ըսին , թէ՝ « արդարոց եւ մեղաւորաց վրայ անձրեւելու ցրուեց զմեղ սին վայրաց մէջ » . հարցուցի թռչնոց , որ ո՛չ կը սերմանեն եւ ո՛չ կը հնձեն եւ չունին համբարանոյք , եւ ըսին , թէ՝ ամենապութ Հայրն կը կերակրէ զմեղ » . հարցուցի վայրենի շուշանաց , որ այսօր կը ծնանին եւ վաղիւ կը թարշամին՝ թէ ի՞նչպէս Սողոմոնին աւելի գեղեցիկ կը հագնին , եւ ըսին , թէ՝ « երկնաւոր Հայրն փառօք կը զարդարէ զմեղ » : Եւ արդ մարդն , զոր զարդարեցիր ասոնցմէ բիւր անգամ աւելի եւ դրիր իրբեւ համառուտեալ աշխարհ մը , որ թէեւ նիւթական վիճակի մէջ է , սակայն հաղորդ նաեւ հոգեղինին , մարդն՝ զոր պատեցիր չնորհօք , լուացիր Որդւոյդ արեամբը եւ լեցուցիր Հոգւովիտ , մարդն զոր ընտրեցեր եւ ընկալար , մարդն ինչո՞ւ ահեղ տանջանաց կը մատնես :

Այլ միթէ ե՞ս ալ ձեզ նման մարդ եմ որ ձեզի պէս խորհիմ , կ'ըսէ Տէր . « Ո՛վ խորք մեծութեան եւ իմաստութեան եւ գիտութեան Աստուծոյ , ո՛րպէս զի առանց քննելոյ են դատաստանք նորա , եւ առանց զննելոյ են ճանապարհ նորա : Զի ո՞վ գիտաց զմիսս Տեառն , կամ ո՞վ խորհրդակից եղեւ նմա (Հոռվիմ . ԺԱ . 33 , 34) : Որովհետեւ երբ հարցուցինք իրեն , թէ՝ ինչո՞ւ համար Սրդարն այնպէս դառնադառն վախճան ունեցաւ , անօրինեցանք . զի այն մարմնոյ եւ աշխարհային ոգւոյ թէլադրութիւն էր . իրաւամբ յանդիմանեց զմեղ Մարդարէին եւ իմաստնոյն բերնով եւ ըսաւ . « Տեսէ՛ք զիա՞րդ կորեաւ Սրդարն եւ չիք որ անսայ սրախւ . եւ թէ արք արդարք բառնին եւ ո՛չ ոք հայի » . . . . կարծ եցինք թէ աշխարհային հանդըստութիւն եւ երկնաւոր փառաւորութիւն վարձք են ճշմարիտ . այլ « Այսպէս ասէ Բարձեալն որ ի բարձունս բնա-

կեալ է յաւիտեան՝ Սուրբն ի մէջ Սրբաց . հոգի յինչն ելցէ , եւ զամենայն շունչ եռ արարի . որ յիս յուսացեալ են , ժառանգեսցեն զլեառն սրբութեան իմոյ . յերեսաց անիրաւութեան բառնի արդարն . եղիցի խալազութեամբ գերեզման նորա , զի բարձաւ ի միջոյ » (Ես . Ծէ) : Քանզի անուղղացից է խորհիլ եւ ըսել . Սրդարն « Կոչէ հայր զԱստուած . տեսցուք թէ ձշմարի՞տ իցեն բանք նորս , եւ փորձեսցուք զվախճան նորա . եթէ իցէ Որդի Աստուածոյ , փրկեսցէ զնա Աստուած . . . Զայս խորհեցան եւ խարեցան եւ ոչ ծանեան զմորհուրդս Աստուածոյ , եւ ո՛չ վարձուց ակն կալան սրբութեան . ո՛չ ընտրեցին զպատիւ ոգւոց անարատից . զի ոգիք արդարս ի ձեւին Աստուածոյ են եւ ո՛չ մերձեսցի ի նոսա մահ . թուեցան յաշս տնզդամաց թէ մեռան եւ համարեցան չարչարանի ել նոցա եւ զնալի ի մենց թեկումն . բայց նոքա են ի խորհազութեան . զի թէ ալէտ յաշս մորդկան տանջեցան , այլ յոյս նոցա լի է անմահութեամբ . զի Աստուած փորձեաց զնոսա եւ որպէս զողակէզս զօհի բնկալաւ զնոսա ի ժամանակի այցելութեան» (Խմաս . Բ . եւն) : Որովհետեւ որչափ որ նիւթեզէն բնութիւնը վայրագ ըլլայ , մեծ եւ ամեհի , այնչափ աւելի կը զդացուի Ամենակալին զօրութիւնը , մեծութիւնը , ներկայութիւնը . անոր ամենատես աչաց առջեւ մահուան տեսակն եւ պատճառն ոչինչ է . քաջաց սքանչելի արիու թիւնն թշուառ արկածներէն աւելի գերազանց է . անոր անյազմթ բազուկը կը կորդէ կ'ասլրեցնէ ոգին , եւ որչափ որ չոյտ եւ դառն ըլլայ իրեն խաւրած մահն՝ այնչափ ալ անյազաղ եւ մեծաշուք վարձահատոյց կ'ըլլայ : « Ո՞վ կը նմանի մեր Աստուածոյն որ բնակի ի բարձունս . անիկայ աղքատները գետնէն կը վերցունէ եւ տառապեալներն աղքեւներէն կը բարձրացունէ , եւ զանոնք իւր ժողովրդեան իշխաններուն հետ իրեւ իշխան կը նոտեցունէ . (Սաղմ . Ճժի) : Մարդ . կրնայ մեռնիլ օրերով ցաւագար՝ եւ ասրիներով կաթուածահար . ամենայն մահ տաժանելի է եւ տառապագին : Եղան որք յանկարծամահ կնքեցին իրենց մահացուն . եղան որք տարեց բոնութեան դէմ կոռուեցան եւ մեռան սիրով Քրիստոսի , եւ խորաններու վրայ ի յարգութիւն բարձրացան : Ո՞ր եւ իցէ մահ վերջին չնորհք է , որովհետեւ առանց մահուան վերջին յարտառեւութիւնն ասպահովեալ չէ . ուստի մահն վերջին չնորհք մ'է եւ ամենամեծ չնորհք : Այլ չդե-

գերիմ պատճառաբանելով. ի՞նչպէս մեռած Աստուծոյ բիւրառոր սիրելիներն . մեռան հարուածոց , քերանաց , սուսերու տակ . մեռան գամուած , անխւներով ջախջախուած , յօդուածնին կորտած , մորթեզերծ եղած . մեռան ժայռերէն հոսուելով , ճնշերու մէջ սասելով , հեղեղներու մէջ խրդդուելով . «Վասն քո մեռանիմք զօրհանապալազ , համարեցաք որպէս զզիսար ի զենու մն » . տուերի նման եւ դրեթէ ոչինչ եղող կետնք մը զոհելով , տուացան անանց կեանքը : Փա՛ռք է ուրեմն . փա՛ռք է անսնց վիճակակից ըլլալ եւ պատակակից :

Այլ ես դեռ եւս պիտի յանդդնիմ ու ըսեմ , ոյս մահկը՝ ո՛չ թէ միայն փառք է , այլ նաև աստուածային իսկ : «Քրիստոսի չարչարին մարմնով եւ գուք ինոյն միտս վառեցարուք» (Ա. Պետր. Դ. 1) Տեսէ՛ք աւեսէ՛ք սա Խաչը եւ վրան գամուած Աստուածորդին . տեսէ՛ք եւ ըսէ՛ք թէ եղառն է երբէք ցաւ նման անոր ցաւոց : Խոսէ՛ , ո՛վ Խաչ . չեզար գու Հրէից գայթակղութիւն եւ հեթանոսաց յիմարութիւն , այլ վրկուելիքներուն՝ Աստուծոյ զօրութիւն եւ Աստուծոյ խմատութիւն . անարդանաց անդունդներէն ի գառ գայթ փառաց ամրարձար : Ահաւասիկ այն մեծ օրինակն որոյ ազգուութիւնն ամսոց յորդութիւնք չմարդացան աղաւառ զել . այն օրինակն՝ տկար եւ խեղճ մարդուն համար հայելի մ՞է , յորում կը տեսնէ իւր թշուառութեանց ու ցաւոց հաւատարիմ գծագրութիւն . սակայն խոշորացոյց հայելի մը՝ յորում ամենայն ցաւք մեծամեծ համեմատութիւններ կ'առնուն : Այն օրինակն բեւեռային աստղ մի է , ում ալէ կոծ մահկանացուն պէտք է սեւեռէ անքթիթ հայեցուածն . այն օրինակն արիւնաթոթաւ սարսափելի վէրք մի է , որ կէսը խաւարեալ արեգակի պէս կեցած է անցած եւ գալիք մարդկային ազգին գոյութեան կամարին վրայ : «Քրիստոսի չարչարին մորմնով» : Անիկա կրեց յուրան ու աօթք , անօթութիւնն ու ծարաւ : Անիկայ յոգնեցաւ ու քրանեցաւ , հեծեց եւ լացաւ : Երկիւղ , կիրք եւ տեսք մահու քստմնեցուցին զինքն , թալկացաւ , յերկիր կործանեցաւ եւ արեան կայլակներ թափեց : Իբրեւ անթիւ սլաքք խոցեցին զինքն արհամարհանք , ծաղր , մատնութիւն եւ հայհոյանք : Կապեցին եւ կոփեցին զինքն , ասլտակեցին , վիրալից կուսական մարդկան խորազմնք տեղատարափ կ'իջնէին . փուշ անասնաբարոյ մարդկան խորազմնք տեղատարափ կ'իջնէին . փուչ եւ տա-

տասկ ծածկեցին Անոր սրբազն գլուխին եւ գամեր Անոր ստուցները ու ձեռուցները . դառնացաւ քիմքն , գելսւ աղփքն , պատառեցաւ սիրոն , խամրեցաւ Անոր երիտասարդ գութեան ծաղիկն եւ ի հող մահու իջաւ Անոր փառքն : Մարդ եւ դժոխք եւ Աստուած պատճեցին զինքն , եւ երբ այս եռաբորբոք բարկութեան ահուոր շունչը զինք չօշափեց , դարձաւ նմանեցաւ շանթահար եղենիի մը եւ ոգեսպառ անշնչացաւ : « Հաւատարիմ է բանս , զի եթէ ընդ նմա մեռաք՝ ընդ նմին եւ կեցցուք . » ( Բ . Տիւ . Բ . 11 . Հոռվմ . Ը . 29 ) :

Երանի՛ ուրեմն քեզ , բի՛ւր երանի , եղբայրակիցդ բարեխատ : զի Որդւոյն Աստուծոյ մահուան կերպարանակից եղար (Փիլ . Գ . 10) . կընտջ աւելի դառն ըլլալ մահը . իւր բոլոր ուժովն յարձակեցաւ վրադ . կողոպտեց քու առոյգ տարիներդ եւ դու թոյլ տուիր . մերկացուց քու փառքդ եւ դու լուեցիր . քակեց կործանեց մարմնոյդ տաճարը եւ դու զոհեցիր . յմրուր քամեցիր Քրիստոնի բաժակն եւ Անոր մկրտութեամի մկրտուեցար . այն հեղեղն քեզի համար կարմիր ծով եղաւ , ուստի անցար յերկիրն Աւետեաց . այն հեղեղն Յորդանան եղաւ , ուստի առաքինութեան մաշկեալդ անցոյց զքեզ Եղիսայի պէս հրեղէն կառօք յերկիրն ամբանալու համար : « Յուղիսից ի ճանապարհի արցէ , վասն այսորիկ բարձր արացէ զլ լուխ » : Ո՛վ վայրկեան . ո՛վ անմահ վայրկեան . ժամանակի կաթիլ մ' ես դու , ժամանակի հիւլէ մը . այլ սրբութիւն , այլ գիւցազնութիւն , այլ նահատակութիւն , այլ անգերջ երջանկութիւն կ'արժես . դու փայլուն մի աստղ ես , որ կը չովզողաւ երկուց աշխարհաց հորիզոնին վրայ . ընդ քեզ պիտի պշնուն արդիք եւ սերունդք : Քանզի երբ ազատեց զորոնք կրցաւ եւ կատարել կարծեց փրկագործութիւնը , երբ ըստ նուիրական պարտուց աճաւալարեց ազատել վերջապէս նաև իւր այս բեկանուա կեանքը , որ այսօր է եւ վազիւ կը թարշամի , երբ եւ լուծ էր դիւցազնական ծտռային օգնականութեամբ իր բընտկարանէն եւ կը պլիծէր ալեաց սրամնութենէն , եկաւ ականջն քաղցրիկ ձայն մը , ազէխորով ձայն մը , փոքրիկ որդեկաց ձայնիկն՝ որ տան մէջ մոռցուած եւ ի կորուստ մատնուելու վրայ հայրերնին յօդնութիւն կը կոչէին : Այն ձայնը հնչեց մեղմիկ ու մեղմիկ , դիւթեց զինքն ու շուա-

րեցուց. զարթեաւ կուրծքին մէջ բոլոր առաքինութիւնը. մեծցաւ, աճեցաւ եւ հսկայացաւ, դիւցազնացաւ. նոր խրախուսեց անպարտելի եւ անսաստն միտքն։ — «Դարձի՛ր, ըստու, այն մահացու հրեշտակին որ ի բազուկո իւր ընկալեալ կը փրկէր զնա ի հսանաց ջուրց, դարձի՛ր ազատենք որդեակներն»։ — «Ինչո՞ւ գառնոմ, ըստ այն հրեշտակին, քու կեանքդ քաղցր է, արեւդ պիտի շիջանի»։ — «Դարձի՛ր, կրինեց, դարձի՛ր զի ինձ կեանք Քրիստոս է եւ մեռանիլ շահ» (Փիշ. Ա. 21)։ — «Ինչո՞ւ գառնոմ, պատուիսանեց հրեշտակը, ահա ջուրք դէ զադէզ կատաղոյեալ կը գուան, հարուա՛ծ մը, եւ ա'լ չկամք» — «Դարձի՛ր, գոչեց, գարձի՛ր, վասն նորա մեռանիմք զօրհանսպագ. այլ ապականութիւնս այս զգեցցի զանմահութիւն»։ — Այլ ինչո՞ւ գառնամ, պիտի չկարողանաս ազատել եւ մենք պիտի զոհուինք»։ Յայնժամ ակնթարթի մը մէջ կշռեց կացութիւնը. երկու նժարներուն մէջ դրաւ վտանգն ու սէրը, սէրը թեթեցուց վտանգը. գրեթէ համոզուեցաւ որ պիտի կարենար փրկել եւ այսպէս գանելով զինքն ի մէջ կենաց եւ մահու, կարմրեցան այտերն երկնից հրով, ժալուեցաւ դէմքն, տեսաւ երկնից վառքն նորն Ստեփանոս եւ լուսաւոր ճառագայթ մը պատեց այն վեհապահծ գլուխն. . . . «Դարձի՛ր, ազադակեց, գարձի՛ր, զի պրազան է պարտքն. եւ վտանգաւ իսկ մահու հարկ է զնոյն կատարել. քանզի ըստաւ Տէրը, » ուր Եսն եմ, անդ եւ պաշտօնեայն իմ եղիցի» (1), ես ալ իրեն պէս զանձն իմ գնեմ ի վերայ ոչխարաց. զի ես եկի զի զկեանս ունիցին եւ առաւել եւս ունիցին»։ — «Դասնոմ, ըստ հրեշտակը, եւ եթէ հարկ ըլլայ, ես ալ քեզի հետ մեռնիմ»։ . . .

Ինչո՞ւ կ'ողբայ ամբողջ քաղաքը իրեւ այրի լցեալ տրտութեամբ. ինչո՞ւ իր այտերէն կը հոսեն գտոն արտասուք. ո՞ւր կ'ընթանաց այս հեկեկաձայն բազմութիւնն. . . մահուան անգութ գործն է. վահ, հարաւ հովիւը, խորտակեցաւ անոր մարմնոյն սքանչելի շինուածը, ընդ տիվմ շաղախեցաւ չնաշմարհիկ մարդարիտը. ելան ամենքն կոծելով ու կուրծքերնին զարնելով. ո՞ւր ի գերութիւն վարեցաւ պրասնեալ մարմինը. հարցուցին հողմերու եւ հողմերը պատասխանեցին. Հեռո՞ւ, հեռու վարեցաւ ի գերութիւն. հարցուցին տղմալից աճդունդներու, եւ աղաղակե-

ցին՝ մեծաձայն. Հեռո՛ւ, հինգ ժամ՝ հեռու. Եւ երեք օր՝  
լացին անթաղ մարմինը. զի վիրաւոր կը ննջէր փոսերու  
մէջ . . . :

Այլ, ո՛վ քաղաք, թոյլ տուր ողբոցդ. Եւ դու, ո՛վ  
գաժան պատկեր մահու, ի բա՛ց գնա ընդ միշտ, ի բաց.  
ա՛լ մեզմէ արտասուք չկան. ա՛լ պիտի չհեծեմք. ա՛յլ եւս  
մեր ողբ պիտի չանապատոէ այս փառաւոր յաղթանակը.  
զի «Յայնժամ փառաւորեցու որդին մարդոյ եւ Աստուած  
փառաւորեցաւ ի նմա (Յովի. ԺԳ)» : Այս յաղթանակը Մար-  
տիրոսութիւն է. որովհետեւ ո՛վ որ վասն հաւասոյ կը  
մեռնի, մարտիրոս է. այլ սէրն մեծադոյն է քան զհաւատու.  
Եւ սս վասն սիրոյ մեռաւ. քանդի ո՞վ աւելի մեծ սէր  
կրնայ ունենաւ քան այն մարդն որ իր անձը իր բարեկա-  
մաց վրայ կը դնէ (Յովի. ԺԵ. 13). «Հեղեղներէն խոեց  
ճամբուն վրայ, անոր համար բարձրացոյց իր գլուխը» :  
Վասն զի երբ ալեաց բոնութիւնը քակեց այն սուրբ ան-  
դանոց շինուածն, երբ առականութենէ անկորուստ մար-  
մինն ի յայտ կ'ածէր անյաղթ բազուկ Աստուծոյն մեռելոց  
եւ կենդանեաց, եւ նոյն իսկ այլակրօնից գորովալիր ար-  
տասուքն՝ ի նշան այն մեծ սիրոյն զոր ներշնչած էր՝ յամեն-  
նեսին ողբացեալ Հանգուցեալն, կ'ընկերանար յուղարկաւո-  
րութեան զանդակաց տիրավի գանգիւնով, եւ երբ չմիաց-  
եալք իսկ կը միցէին — ո՛վ սքանչելեայս — այն սուրբ տ-  
ւանդն պահել իրենց Դամբանարանին մէջ իրրեւ գանձ բաղ-  
ձալի, արդէն արդարացեալ եւ ամեն՝ արատէ մաքրեալ հո-  
դին Փարաւոնայազթ Մովսիսի պէս օրհնութիւն կ'երդէր.  
«Օրհնեսցուք զծէր զի փառօք է՝ փառաւորեալ (ԵՂ. ԺԲ. 1)  
Տեսին զքեզ ջուրք, Աստուած, տեսին զքեզ ջուրք եւ եր-  
եան (Սաղմ. ՀԵ. 17). ասլուցայ ես ի խորոց ջուրց բաղ-  
մաց. մի՛ ընկլցեն զիս պայոյտք ջուրց եւ մի՛ ընկլմեսցեն  
զիս անդունդք խորոց. Ջրհոր մի՛ կափուոցէ զըերան իւր ի  
վերայ իմ (Սաղմ. ԿԲ. 15. 16). զի վրկեաց զանձն իմ ի  
մահուանէ եւ զաշս իմ յարտասուաց (Սաղմ. ՃԺ. 8)» :  
Եւ ընկերքն (1) միաձայն կ'երդէին. «Անցաք մեք ընդ ջուր

(1) Գեր. Գրմլզեան Վ. Էն զատ եօթն անձինք եւս զո՞ն զնացին այս  
արտափելի արկածին. 1 վիչէն Վ. Աւզերեան, որ իր նայրենիքը ծգելով  
եօզատ զնացեր էր աշխատելու եւ բահանայ ըլլալու նպատակաւ. 1. նոյ-

Եւ հաներ զմեզ ի հանգիստ (Սաղմ. ԿԵ. 12): Եւ արդէն ներկայացած էր երկնաւոր փեսային առջեւ ըսելով. «Ահաւասիկ ես եւ մանկունք իմ», եւ լսած էր անոր հրաւէրն. «Ազնի՛ւ, ծառայ բարի եւ հաւատարիմ. մո՛ւտ յուրախութիւն Տեսան քո», եւ առած էր նահատակաց պատահին ու մարտիրոսաց արմաւենին: «Հեղեղներէն խմեց ճամկուն վըրայ, անոր համար բարձրացուց իր գլուխը»: Ո՞ւր է ուրեմն, ո՞վ մահ, քու յաղթութիւնդ. ո՞ւր է աշխարհիս կամ տանջանց խափրը. առաքինութիւնը կը պատկուի եւ յաղթութիւնը կը փառաւորուի: Ահաւասիկ գովուեցաւ նա ի Հոգւոյն Սրբոյ յանձին Շմաւոնի որդւոյ Ոնիայ Քահանայի մեծի. «Անոր օրով, կ'ըսէ Տէր, եւս քան զեւս զարգացաւ Տաճարին փառաւորութիւնը. հոգաց նա իր ազգը եւ ի կորցուտենէ ազատեց: Անիկայ փայլեցաւ Աստուծոյ Տաճարին մէջ իբրեւ զաստղ առաւօտու. կամ իբրեւ ծիածան ամպերու վրայ, կամ իբրեւ վարդերու ծաղիկ գարնան օրերուն մէջ. գեղեցկահոտ չուշան էր նա կամ բազմաբուրեան խունկ. մարգարտայեռ ոսկեղէն անօթ, բազմաստեղն ձիթենի եւ կամ մայր կիբանանու բարձրաբերձ. պատակ եղբարց իւրոց» (1) . . . Եւ ի՞նչ պիտի ըլլայ այն ժողովուրդը՝ որուն համար իր անձը զոհեց. ո՞չ ապաքէն պիտի ցրուին վայրավատին անհովիւ ոչխարներու նման: Ո՞չ, ո՞չ, պիտի փշրեմ, կ'ըսէ Տէր, ի չնորհս իմ Նահատակիս ամենէն քարացեալ սրաերն. պիտի խորտակեմ հարթեմ հպարտացեալ բարձրութիւններն. անոր արիւնաթաթաւ գերեզմանէն պիտի բուռուցանեմ անմահութեան պատուղներ եւ անհամար սերունդ. «Տաց զշարս փոխանակ գերեզմանի նորա եւ զմեծամեծ փոխանակ մահու նորա. զի անօրէնութիւն ինչ ո՞չ գործեաց եւ ո՞չ գտաւ նենգութիւն ի բերան նորա» (Ես. ԾՊ. 9):

Եւ դու ցնծա՛ պարձանօք, քաղա՞քդ կղեմայ. դու որ ուոգեալ քրտամիր Առաքելոցն Պետրոսի եւ Պօղոսի եւ ա-

նին քեռորդին Յովհ. Վրժ. որ նոյն վախճանաւ կ'աշխատէր հոն 1. Դիւցագիտական ծառայն Միսար, որ արդէն շատերը ուսերուն վրայ ջրերուն մէջէն ազատած էր, եւ Գրմըզեան Վ. ը ազատելու վրայ էր երբ տղոց ծայնն առին ու ներս մտան: Դարձեալ ինչպէս գրած էր Մազսութեան Վ. ը, ականատես եւ ինքն եւս նոյն ծառային միջոցաւ ազատուած, 4 տնօրինք եւս նալպանետեան ընտանիքէն: Աստուած հանգիս պարզեւէ»:

(1) Եկղ- կամ Միրաք. Ծ. ըստ Վուլգագայի:

բեամբ այնքան փառաւոր մարտիրոսաց, ախուեցիր քու որդիքդ ի հեռաւոր գաւառս Աւետարանի լոյսը ծաւալելու, դու որ երկնից համար այնչափ բնակիչներ պատրաստեցիր, ո՞ղջ լեր ու փառաւորուէ՛. զի դու տուիր այս արիւնն ալ, դու պաղաքերեցիր այս չքնաղ պտուղը, դու հասցուցիր այս նահատակը, որ հեղեղներէն խմելով բարձրացոյց իւր գլուխը:

Եւ արդ, ո՞վ սիրեցեալ եւ ողբացեալդ Յովսէդի Վ. Գրմըսեան, կը մնայ ինձ տալ քեզ հրաժարական ողջոյնս, իբրեւ որդի եւ աշակերտ եւ բարեկամ եւ եղբայրակից...: Խաղաղութեամբ ըլլայ Գերեզմանդ եւ անխռով հանգչի խոշտանգեալ մարմինդ մինչեւ ցփողն յետին. ծաղիի եւ բուրէ առաքինութեամբդ յօգուտ հաւատացելոց: — Այլ ես ի նշան յաւէրժական տխուր սիրոյ ի՞նչ տամ քեզ. վա՞րդ մը. — այլ կը թարշամի. հառաչա՞նք մը. — այլ կը նուազի. արտասո՞նք մը. — այլ կը ցանմաքի: Այլ ես ի՞նչ տամ քեզ, եթէ ոչ վառած սրտի խունկն, որ է աղօթք հաւատացելոյ. տամ զայս յետին նուէր եւ առնում քեզմէ տրիտուր սուրբ օրինակդ եւ դնեմ զայն ծոցիս մէջ եւ անկորուստ պահպանեմ մինչեւ յօրն կոչման իմոյ: Եւ փոխան այն քաղցր ժամերուն յորս քեզի կենակից եղայ, քու յիշատակդ ըլլայ ինձ առաջնորդ կենաց. սորվիմ քեզմէ յայսմէնեաէ թէ կեանքն ջախճախ եղէք մի է, ստուեր եւ ունայնութիւն. սորվիմ որ եթէ արդարն հազիւ կեցցէ, արա մեղաւորն ո՞ւր գտանիցի. սորվիմ թէ ի պատիժ մեղաց եւ ի վարձ արժանեաց հարկաւոր է չարչարուիլ: եւ թէ յաջողութիւնք զմեզ կը կուրցնեն ու մոլորցնեն, խակ ձախորդութիւնք կը չափաւորեն, կը զօրացնեն եւ կը սորվեցնեն թէ մարդ տկար է եւ յողդողդ, իսկ Աստուած միայն իմաստուն է: Եւ քու պատկերդ թող անջինջ դրոշմուի մուացս մէջ: Երբ ցանկութեամբ պիտի ջեսնու ըզեզս կամ թուլութեամբ պիտի լքանի սիրտս, երեւցո՛ւր քու երեսդ եւ ապրիմ. երեւէ՛ ինձ գիշերը մթութեան մէջ եւ ցերեկը յաղթնութեան. երեւէ՛ ինձ իբրեւ տիպար ճշմարիտ քահանայութեան, իբրեւ լիազօր գեսալան երկնից թագաւորին. երեւէ՛ մակուան ցուրտ շլարշն տակ, վիրաւոր, արիւնաթաժաւ, ճմլեալ, ջախճախեալ, եւ երեւէ՛ ինձ անսպառ կենդանութեան փայլովն, ճառագայթարձակ, երջանիկ,

փտուաւորեալ եւ անմահ . զոյց ինձ պսակիդ եւ արմաւե-  
նոյդ գեղեցկութիւնը , արքեցո՛ զիս նոցին տեհանօք . որ-  
պէս զի չյառեմ այլ եւս հայեցուածքո այս աշխարհիս  
տղմին վրայ , ուր ամենայն ինչ ունայնութիւն է եւ ոգւոյ  
աննկարագրելի տառապանք . որպէս զի զբրիսոս շահելու  
համար ամեն բան կզկանա համարիմ (Փիլ . Գ . 8) . որպէս  
զի կառեիմ , չարչարուիմ , ճգնիմ , յազթեմ , պսակուիմ . եւ  
ըստի ինձ համար եւս . «Հեղեղներէն խմեց ճամբուն վրայ .  
անոր համար բարձրացոյց իւր գլուխը» :

ԳԵՐՈԳ ՎՂԴՈՏ . ԹԷՐՁԻՊԱՇԵԱՆ

## ՊԱՇՏՕՆԱԳԻՐ

ԱՄՓԱԲԱԼ Ի ԳԻՒՅԵՑ ԱՐԴԱՐԻՒԹԵԱՆ ԵՒ ԿՐԾՆՅ ՏԱԽԱՐԱՄԻԹԵԱՆ ԱՌ-  
ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆ ՑՈՒՆԱՅ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆ ԱՌԱՆՉԱՇԱՇՆՈՐՀՄԱՆ  
ԽՆԴՐՈՅ ՄԱՍԻՆ



Մազամի Ս.Ա.Տարէթի ուղմատէն թէշրինի սանի 13 թարիսլի Ասլիյէ նէ-  
զարէթի նէլիլէսինէ եազգրոյ նէզարէթի միւշարիէշիատէն բում Բաթ-  
րիքիսանէսինէ թէպլիդ զըլընան թէզրէրէի սամիյէնին սուրէթի տիր .

« Պում բաթրիդիսանէսինին՝ իմթիյազաթի մէզհէսլիյէյէ  
ստակր վագը օլան իսթիստուը իւղէրինէ մուգատտէմա մէճ-  
լիսի մախսուսու վիւքէլածան ճէրէյան խտէն թէտգիգաթ վէ  
միւզաքէրաթը հալի մուգարրէրաթ՝ Բաթրիդլիյէ լութ-  
թէպլիդ , րիւթալիթլիւ Բաթրիգ էֆէնաի հազրէթէրինտէն  
ճէլասլէն ալընըլ թէզրէրէի տէվէթէրիյլէ Պապի Ալլիէ  
իրսալ գըլընան թագրիրտէ , միւսթէտիյաթի վագըա իւէ  
մուգարրէրաթ պէյնինտէ էսասլը Փարզլար օլտուզու իշար  
օլունմուշ , վէ սլու Փարոգլար իսէ նախագայոյա տաիր Բաթ-  
րիգիսանէտէն վէրիլէճէք գարարը նիհայիլէրին իճրասընտա  
հասպը վազըմ կէլէն մէտեռնլար իշխու տիկէր թարափ-  
տան մասրաթ ալընմամասը , վէ վասիյէթ պահունտա վէրէ-  
սէսի քէսիր վէ եա սալիր օլուն պիր խրիսթիյանըն վա-  
սիյէթ օլունան էմվալի մէնգուլէ վէ էմլաքընըն մէհաքիմճէ


թահրիրաէն՝ վարէսթէ օլմասը, վէ մէքթէսլէր խուսու-  
սընսատ տէրս բրոկրամլարը իլէ մուալիմ վէ մուալիմէլքր  
շէհատէթնամէլէրինին՝ Բաթրիգ վէ եա մէթրօրօլիտսանէ-  
լէրաէն թաստիգ խտիլմէսի, վէ Պուլիար բիսդօրօսլարլնըն  
թէպտիլի գըյաֆէթլէրի իլէ պէրտալէր պէրտի ալիլէրինէ  
պազը Փըգրաթ տէրծի մատաէլէրինտին իսլարէթ օլտուզու-  
Բաթրիգխանէ թարաֆընտան շիփանէն վէրիլէն իյզահաթ-  
տան անլաշըլմէը օլմասընա մէպնիյ մէվատի մէգիւրէ  
մէճլիսի մոխսուսու վիւքէլատա լէտէթթէտգիգ, նափոգա  
հագգընատ վէրիլէճէք գարարը նիկայիլէրին իճրատթընտա  
հապսը, լազըմ կէլէն մէտեռնլար իշիւն տիկէր թարաֆտան  
իաչ մասրաֆը ալընմամասը՝ մրւվափրգի մատաէլէթի Սէ-  
նիյէ օլմալէ, պու պապտէ, իճրա նիզամնամէսինէ պիր  
Փըգրաթ մախսուսէ իլավիսի, վէ վասլյէթ խուսուսունտա  
քէպիր վէ. եա սազիր վէրէսէսի օլուպտա, վէ Փաթի իսէն պիր  
Խրիսթյան թէրէքսինտէ զուհուր կտէն վասլյէթնամէ՝  
Բաթրիգ վէ եա մէթրօրօլիս վէ եախօտ բիսդօրօս թարա-  
Փընտան թաստիգ օլունմուշ պուլունտուղու հալուէ մահքէ-  
մէճէ միւթէպէր թութուլուպ՝ արազի էմիրիյէ վէ էֆգափ-  
տան մատատ շամիլ օլուպուղու կէրէք մու վէ կէրէք միւլ-  
քին՝ մուսախւն լէճէ եանի վասլյէթ օլունան ճիկէթէ պիլու  
վազը եէտ թէրք իտիլմէսի, վէ պէյնէլ վէրէսէ իշպու վասի-  
յէթնամէ տէն միւնապահս միւնազամէ՝ բաթրիգխանէնին մէճ-  
լիսի միւխիթէլիթ նիզամնամէսինին Յիւնճիւ մատաէսի մուճէ-  
սինճէ Տէրիստատէթտէ մէ ձիսի մէգիւրտէ բույէթ օլուն-  
տուղու կտափի, վիլայաթտտ տափի մէթրօրօլիտսանէ մէճլի-  
ոխտէ էչօրիւլիւպ՝ մէ ձալիսի մէգիւրէտէն վէրիլէճէք իլա-  
մաթըն հիւքիւմէթէճէ իճրա տափի լէրինտէ իճրա օլունմասը,  
վէ մէքթէպէլէրին տէրս բրոկրամլարը՝ բաթրիգխանէ վէ մէթ-  
րօրօլիտսանէլէրճէ թանգլում վէ եա թաստիգ, վէ մուալիմ վէ  
մուալիմէլէրին տիբօմա վէ շէհատէթնամէլէրի եինէ անլէր  
թարաֆընտան թաստիգ օլունտուղու կիափի, հիւքիւմէթէտէ  
մալիւմ օլմասը լազըմ կէլէճէյինտէն, Աէարիփ միւֆէթ-  
թիչի վէ եա միւտիրի թարաֆընտան մէքեաթիպին թէտ-  
րիստը թէֆթիչ իլէ մուզիրը տէրս, վէ օլ վէճէլ շէհա-  
տէթնամէսի օլմայան մուալիմ վէ մուալիմէլը կէօրիւլ-  
տիւյիւ հալուէ, բաթրիգխանէ վէ մէթրօրօլիտսանէ իլէ պիլ  
մուխասէրէ օ մագուլէ տէրսլէրին օդութտուրուլմամասը վէ

օ կիալի չէհասոէթնամէսիզ մուալլիմ վէ մուալլիմէլէրին ան-  
լէր վասըթասը իլէ թէպտիլ իթտիրիլմէսի , վէ Պուլկար  
մէթրօրօլիալէրինէ թէպտիլ քիավէ իթտիրիլմէսի՝ մուգատ-  
տէմա Պուլկար եքզարդը էֆէնտիյէ թավսիյէ օլունտուղու  
միսիլի պու քէրրէ տախի թավսիյէ իտիլմէսի գարարլաշտը-  
րըլմը օլուուղունա , վէ պիր միւտտէթտէն պէրի քիլիսէ-  
լէրտէ ային իճրասընըն թաթիլինտէն տօլայը շու կիւնլէրտէ  
Ռումէլինին Պուլկար վէ Ռում էհալիսի թարափընտան բաթ-  
րիգխանէ ալէյհինէ պիր թագըմ շիքեայէթլէր կէլմէքտէ  
օլուպ , հիւքիւմէթի Սէնիյէնին՝ իմթիյազաթի մէզէէպիյէ  
հագգընտա էօթէտէն պէրի իլթիզամ էյլէտիկի մէսլէքի  
մուհաֆազաքեարի վէ ատալէթշիտարի՝ ճիւմէճէ մալիւմ օ-  
լուպ , թէպիլզաթի սապգատա պէրթաֆուլ պէյան գը-  
լընտըլը վէճհլէ , իմթիյազաթի մէզգիւրէ թէմասը իլէ մահ-  
Փուզ վէ մէրի օլմաղլէ պէրապէր բաթրիգխանէյէ վէ րու-  
հսաի րուհանիյէյէ ախտ մէվատտըն մուամէլաթը՝ խայինէ  
թէսհիլ տախի խտիլտիյէնտէն , պունտան տօլայը էմին վէ  
միւթմէին՝ վէ մին էլ գատիմ ճանիսի տէվլէթի Ալիյէտէն  
բաթրիգխանէյէ իհսան վէ թարաֆի էշրէֆի հազրէթի  
Բատիշահիտէն թէեյխտ պույրուլան միւսաստաթի Սէնիյէ-  
նին գատրինի պիլէրէք մէմուն վէ միւթէշէքքիր օլմալարը  
լազըմ կէլէճէյինէ պինաէն , քէմաքեան իյֆայի վէզայիֆի  
մէմուրիյէթէ միւպտէրէթ վէ իալրազի մէասիրի սատա-  
գաթ իլէ քիլիսէլէրտէ ային իճրասընըն թաթիլի կիալի  
Ռում ճէօմասթընըն ինքիսարի գուլուպունու տա'ի հալոթ-  
տան , վէ սըֆաթի թապիլիյէթէ միւնաֆի մուճիսլի մէսու-  
լիյէթ սափր թէշէպտիսաթտան թէվագգը վէ միւճանէպէթ  
օլունմասը խուսուսունուն՝ նէզարէթի ճէլիլէլէրի վասըթա-  
սը իլէ Բաթրիգ էֆէնտիյէ թէպիլի թէզէքքիր գըլընմըլը ,  
վէ պիլիսթիզան իրատէի Սէնիյէի հազրէթի Բատիշահի օլ  
մէրքէզտէ շէրէֆունիհ օլմուշ օլմաղլէ , պէր մանթուգու  
էմրիւ ֆէրմանի ճիւմայուն իյֆայի միւգթէզասընա հիմ-  
մէթ պույրուլմասը սիյագընտա :

( Թարիգ )

## ՅՈՒՆԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

ՊԱՇՏՈՆԱԳԻՐ Բ. ԴՐԱՆ



Ահաւասիկ Թարգմանութիւնն այն եպարքոսական պաշտօնագրին, որ՝ 13 նոյեմբեր 1306 թուականաւ, Գատական ու Կրօնական զործոց հայարարութեան ուղղուած է եւ զոր այս վերջինն հաղորդած է Յունաց Պատրիարքարանին։

**Յ**ունաց Պատրիարքարանի առանձնաշնորհմոնց խընդրոյն վերաբերեալ այն խնդրանաց վրայ, որք Յունաց Ամեն։ Պատրիարքին կողմէ մատուցուած էին, Նախարարաց Խորհրդոյ կողմէ տրուած որոշմունք հաղորդուած էին Ն. Ամենապատուութեան։

Արդ, Յունաց Ամեն, Պատրիարքն՝ բագրիրով մը, որ Զեր Վսեմութեան մէկ պաշտօնագրովը զրկուած է Բ. Դրան, ծանուցած է թէ իւր խնդրանաց և տրուած որոշմանց մէջ հիմնական տարբերութիւններ կան։

Պատրիարքարանի կողմէ տրուած բերանացի բացատրութեանց համաձայն, այդ տարբերութիւննք կը բաղկանան հետեւեալներէ։

Ամուսնական գատերու մէջ՝ պարէնի (նափազա) առթիւ Պատրիարքարանի կողմէ տրուած վերջնական որոշմունք գործադրուելու պահուն երբ պարտականին բանտարկութիւնն հարկ դատուի, պահանջող կողմէն ո՛ր և է ծախք չառնուլ բանտարկեալ պարտապանին համար։

Ժառանգական խնդրոց գալով, գատարանք չմիջամտեն այն անշարժ և շարժուն կալուածոց զորս քրիստոնեայ մը կտակած է, նոյն իսկ եթէ ժառանգորդք չափահաս կամ անչափահաս ըլլան։

Դպրոցական խնդրոց համար ալ, Պատրիարքարանն եւ կամ Մետրապոլտարանները վաւերացնեն ուսմանց ծրագրերն և ուսուցչաց ու ուսուցչուհեաց վկայականները։

Վերջապէս, փոխել պուլիսր եպիսկոպոսաց հագուստի ձեւն և անոնց Պետարին մէջ ինչ ինչ տրամադրութիւններ գնել։

Նախարարաց Խորհուրդն, յետ խորհրդակցութեան, հետեւեալ որոշումները տուած է.

Ա. Նկատելով, որ՝ երբ սլարէնի առթիւ տրուած որոշման մը գործադրութեան մլահուն պարուապանին բանտարկուիլն հարկ դատուի, արդարութեան հակառակ է սլահանջող կողմէն ուտեստի՞ծ ամփք մը առնուլ բանտարկեալ պարտականին համար, որոշուած է այդ մասին մասնաւոր հատուած մը աւելցնել վճիռներու գործադրութեան կանոնագրին մէջ (ինչա Նիգամնաևէսի):

Բ. Եթէ չափահաս ու անչափահաս ժառանդորդներ ունեցող քրիստոնեայ մը կտակ մը թողու, որ վաւերացած ըլլայ Պատրիարքին, մետրապոլտին կամ եպիսկոպոսնի մը կողմէ, այդ կտակ դատարանաց կողմէ Ընդունելի պիտի դատուի: Կտակեալ անշարժ ու չարժուն ստացուածքներն, ի բաց առեալ Վագըֆներն ու Միթյէ կոչուած հողերը, կտակընկալին պիտի յաճնուին առանց ո՛ր և է կողմէ միջամկտութիւն մը ըլլալու: Եթէ ի մէջ ժոտանդորդաց այդ կտակներու առթիւ վէճ ծագի, Պատրիարքարանի Խառն ժողովոյ կանոնագրին Գ. յօդուածին համաձայն՝ այդ վէճեր պիտի կարգադրուին ի Կ. Պոլիս Խառն ժողովին և ի գտաւոս Մետրապոլտարանաց ժողովներուն մէջ, որոց կողմէ տրուած վճռագիրք պիտի գործադրուին կառավարութեան գործադիր իշխանութեանց միջոցու:

Գ. — Ինչպէս որ վարժապահաց ուսմանց ծրագրերը կը պատրաստուին ու կը վաւերացուին Պատրիարքարանին ու Մետրապոլտարանաց կողմէ, և ուսուցչաց ու ուսուցչուհեաց վկայականք ևս այդ կրօնական իշխանութեանց կողմէ կը վաւերացուին, հարկ է որ կառավարութիւնն ևս ադանց վրայ տեղեկութիւն ունենայ: Հետեւարար վարժարանաց մէջ աւանդուած ուսմունք պիտի քննուին Մէարիֆի քննիչին կամ տնօրէնին կողմէ, եւ եթէ հաստատուի որ վնասակար նիւթեր կ'աւանդուին և վկայական չունեցող ուսուցիչներ կը գտնուին, վերոյիշեալ վնասակար նիւթերու ուսուցումը Պատրիարքարանի կամ Մետրապոլտարանաց հետ կատարուած բանակցութենէ մը յետոյ, պիտի արդելուին և վկայական չունեցող ուսուցիչք կամ ուսուցչուհիք անոնց միջոցաւ պիտի փոխուին:

Դ. — Պալով պուլիար եպիսկոպոսներու հագուստի ձեւը

փախելուն, ինչպէս որ արդէն յանձնաբարուած էր Պուլկարաց Գեր. Ծիղարքին, այս անգամ եւս միեւնոյն յանձնաբարութիւնը պիտի ըլլայ:

Ժամանակէ մը ի վեր յոյն եկեղեցեաց մէջ կրօնական արարողութեանց գաղ արումն, այս օրեւո աեզի տուած է Բումէլի յոյն ու պուլկար ժողովրդեան բաղանաց ընդդէմ Պատրիարքարանի: Յայտնի է ամենեցուն թէ կայս. կառավարութիւնը բնաւ շեղած չէ կրօնական առանձնաշնորհմանց նկտմամբ ի վազուց անտի իւր ունեցած պահպանողական և արդարակարով ընթացքէն: Ինչպէս որ մանրամասնօրէն բացարուած էր նախորդ զեկուցման մէջ, այդ առանձնաշնորհմանը ամրողջովին կան և են ի գործադրութեան. միանգամայն մեծ գիւրութիւնք բնծայուած են Պատրիարքարանի ու կրօնական պետերու վերաբերեալ գործոց: Պատրիարքն ու կրօնականք յետ այսորիկ պէտք է վստահ ու ապահով ըլլան և գնահատելով այն առանձնաշնորհումներն որք կայս. կառավարութեան կողմէ Պատրիարքարանին շընորհուած և վեհ. Սուլթանին կողմէ վաւերացուած են, գոհ և երախտապարտ մնան:


Նախարարաց Խորհուրդն որոշած է նաև Ձեր Վաեմութեան միջոցաւ հրաւիրել Ամեն. Պատրիարքն, որպէս զի վերստանձնէ իւր պաշտօն, և անձնանուիրութեան փորձ մը տալով զգուշանայ այնպիսի ընթացքներէ, ինչպէս է եկեղեցեաց մէջ կրօնական արարողութեանց գաղարումն, որք յոյն հասարակութիւնը կը վշտացնեն, և որք հակառակ են հաւատարմական զգացմանց եւ պատասխանատուութիւն կը հրաւիրեն:

Կայս. Իրատէ մը վաւերացուցած ըլլալով վերսյգրեալ որոշումները՝ Ձեր Վաեմութիւնը պիտի հաճի ըստ այնմ հարկ եղածն ի գործ գնել:



## ՀԱՆՐԱՊԻՐ ՀԱՅ ԵՐԵՒԵԼԵԱՑ

### Ա Թ Վ Ե Հ . Ս Ա Կ Լ Թ Ա Ն Ե



Թուրք եւ ազգային լրազիրը նրասրակեցին հայ երեւելեաց կողմէ առ Վեհ. Սուլթանն մատուցեալ նետելեալ հանրազիրը.

Անձինք ոմանք առոտ անդ ապօրէն հրատարակութեանց եւ գործողութեանց համարձակում են, հայ Հասարակութեան փրկութեան ու շահուց միասով նախատակի մը ծառայելով, եւ միանդամոյն նպատակ ունենալով խզելու հայ հպատակաց Օսմանեան կառավարութեան հետ դարձաւոր հաւատարմութեան կազերը։ Այդ անձինք այդ կերպիւ կ'աշխատին պարզամիտները խաբել։

Այդ անձինք հայ հասարակութեան ամենափոքր մէկ մսս մը կազմելով, ընաւ ո՛ր և է հանգամանք եւ արտօնութիւն չունին յահուն հայ հասարակութեան գործելու։ Այս անձանց մէջ գլխաւոր անհատ մը չգտնուելովին, յայտնի կ'ըլլայ թէ հայ հաւատարիմ հպատակներն անոնց նպատակին չեն ծառայեր։

Հայ հաւատարիմ հպատակներն հինգ հարիւր տարիէ ի վեր Զերդ Վեհափառութեան Օգոստավաս. Նախնեաց բարձր հովանուոյն ներքեւ ասլրելով, պահպանած են իրենց կրօնքը, լեզուն ու ազգութիւնն և երջանիկ ու անդորր կացութեան մը արժանացած են։ Հայերն առ այս իրենց ամենէն նուրիսական պարտականութիւնը համարած են հաւատարմութիւն ու Օսմ. կառավարութիւնն եւ ասոր փախարէն արժանացած են կայս. կառավարութեան վատահութեանն ու պաշտպանութեանը։

Մանաւանք այս դարուս մէջ, չնորհիւ մեր Օգոստավաս Վեհափետին ձեսք բերուած այնչափ օգտաշատ արդիւնքներ Զերդ Վեհափառութեան բարեբաստիկ գահակալութեան օրէն ցայսօր ծառայած են, առանց բացառութեան, բոլոր կայս. հպատակաց բարոյական ու նիւթական յառաջադիմութեան։ Հայ հաւատարիմ հպատակներն, որք օգտաւած են այդ արդիւնքներէն, յայտնի է թէ առկէ յետոյ եւս պիտի արժանանան կայսերական չնորհաց։

Հայ հաւատարիմ հպատակաց ամենամեծ վասիսքն է ամենայն ապահովութեամբ ու անգարբութեամբ ապրիլ շնորհիւ կայս. կառավարութեան գթութեանն ու արդարութեան :

Ձեր Վեհափոռութեան ամենալավարհ ծառայք :

(Սուրացրութիւն)

(Փաշայներ) Ելեւմտական նախարար Յակոբ, Ծերակուտի անդամ Արքահամ. Արտաքին զործոց նախարարութեան խորհրդական Տատեան Յարութիւն. — (Պէյեր և էֆենտիներ). Գաւական նախարարութեան խորհրդական Վահան, Ծերակոյքի անդամ Մէրվիչն. Գետական խորհրդոյ անդամ Ապրօ. առաջին ճարտարապես Մարգին Պալեան. Գետական խորհրդոյ անդամ Նուրեան. Բէժիի բոլիսէրներէն Մարգին Համամեան, Բ. Դրան իրաւագէտ խորհրդական Խարբէլ Նորատունկեան. Մարտու Սիմոն, Արտաքին զործոց նախարարութեան խորհրդականի օգնական Եղիան Զայեան, Արտաքին զործոց նախարարութեան հաշու ակալ Դրիգու Խըսբեան, Հպատակութեանց Դիւլանին Տնօրէն Շնան Պալտատէան, Վճռաբեկ ատենի անդամ Կարապետ Խումանան, Կայս. պալատան խորհրդական թժիշէ Տիգրան Փեշտմաննեան, Կայս. շէնքերու ճարտարապետներէն Յոհաննէս Ազնառուեան, Վառոզապետ Պօղոս պէյի որդի Առաքել, Արիկ Աւննեան, Ապահովութեան Սնսուկի արկադիալ Յովհաննէս Փափազեան, Մարտապետի Դրան Թարգմանութեանց սենեկին Տնօրէն Միքայէլ Մամիկոննեան Մարտու Սիպուհ. Առեւտրական երկորդ զատարանին նախազան Թումբսա Խորասաննեան, Գիւլպէնինեան Մարգին, Քերաբննիչ ատենի անդամ Խարբէլ Քարբէլեան, Առեւտրական առաջին զատարանին անդամ Տիգրան Եռուսութեան, Յովհաննէս Հոսանան. Մատթէոս Աւննեան, Անտոն Համեան, Տեղրան Կիւմիշկիրտան, Առեւտրական Սենեկի անդամ Խանուկ Ասպանեան, Փատարան Աղերսանդր Մէրի. Էմզուի, Փատարան Աւենիս Գոլուեան, Հարենց Նշան, Միքայէլ Մոմնեան եւ Բարսել Հալամնեան.

\* \* \*

Սյս հանրագրոյնի պատասխան կայս. պալատան առաջին բարտուգարը հետեւեալ զիրն ուղղած է հանրագիրն սորուգոյ Վսեմ. Յակոբ, Արքահամ ու Յարութիւն փաշաներու, Վսեմ. Վահան էֆենտիի, Վսեմ. Մարգին պէյ Պալեանի, Վսեմ. Ապրօ էֆենտիի, Վսեմ. Մարգին էֆենտի Համամեանի, Վսեմ. Մարտու Սիմոն պէյի եւ այլոց.

Ձեր կողմէ միահալպյն պատրաստուելով Վեհ. Սուլթանին մասաւցեալ հանրագիրը ցաւ կը յայտնէր թէ մէկ քառնի անձինք ձեռնարկած են պարզամիտներ խարել, Հայ հաւատարիմ հասարակութեան փրկութեան ու շահուց միասուղ նախատակի մը ծառայելով և կայս. կառավարութեան հետ վազեմի հաւատարիմութեան կազը խզելու նպատակու:

Միանդամայն յարած էիք թէ այդ կարգի անձինք Հոյոց ամենամաքը մէկ մասն բլլալով, բնաւ արտօնութիւն չունին յանուն հաստրակութեան գործելու, և թէ հայ հպատակներն այդ տեսակ անձանց վիաստակար նախակին բնու մասնակցած չեն։ Այս հանրագիր ներկայացուած է Վեհ։ Սուլթանին, որ հրամայած է հետեւեալներն հազորդել Ձեզ։

Ն. Վեհափառութիւն բոլոր վին վասահ է թէ հայ կայս։ Հպատակաց դարաւոր սէրն ու հաւատարմութիւնն առ օսմանեան գահն, բնու նո աղած չէ։ Այս օրերս մէկ քանի անձանց կողմէ ձեռնարկուած թշնամուկան ու խռովայրով հըրատարակութիւնք ու գործովութիւնք, փաքրաթիւ կարձամիտներէ զառ և ոչ մէկ հայու մը հաւատարմութեան զգացմանց կրնան խափան բլլալ Վեհ։ Սուլթանն այս մասին բնաւ չարակուսիր և հայ հպատակաց նկատմամբ իւր կայս։ Համարումը կատարեալ է։ Միանդամայն նոյն հաստրակութեան երեւելեաց կողմէ այս կերպիւ հաւատարմական զգացմանց արտայացուաթիւնը կայս։ բարձր գոհունակութեան արժանացած է։ Ն. Վեհափառութիւն յոյս յայտնած է թէ աղդու խրատներ պիտի արուին անոնց որք հաւատարմութեան նշանարանին բնաւ չհամապատասխանող ցնորական ինչ ինչ գաղափարներու ծառայել կ'ուզեն, և թէ ջանքեր պիտի ըլլան այդ տեսակ անհատներն օրինաւորութեան և ողջմուռթեան շաւզին մէջ վերստին մացնելու համար։

17 Թէպիւլ ալսոր 308

18 Նոյեմբեր 306

---

## ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԲՈՂՈՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՎԻՃԱԿԸ

---

\*

Սորալանդութեան պետերու հետ ունեցած հակածառութեան մէջ Պոսիւէ քանիցս գուշտակած էր թէ Բողոքականութիւնն պիտի յանդէր վերջապէս ի կրօնական անտարբերութիւն, մինչեւ որ ուրանայր ամենեւին ամեն կերպ վարդապետութիւն։ Փոխոյխամանց հեղինակին այն մարգարէտական նախատեսութիւն, որ երկեմն իբր ծայրացեղու-

թիւն կը նկատուէր , այժմ կ'սկսի ստուգուիլ : Ամենուրեք ,  
ի Գերբմանիա , ի Հեղինեան , ի Շուէտ եւ նոյն խոկ յԱնդղիս  
բողոքական ազգային եկեղեցիք բոլորովին քայքայուելու  
վրայ են . նոքա ըստ ինքեան լոկ մարմիններ են , եւ միայն  
յիշեալ Տէրութեանց նիւթական եւ շահախնդիր ձեռն-  
տուութեամբն յոտին կը կենան . բողոքականութեան կրօ-  
նական կեանքն , — Եթէ կեանք արժանի է կոչել զայն ,  
— մնացած է միայն այն անթիւ անհամար ազանդոց քով ,  
որոնք սոյն առաջին մարմնոյն ծնունդներն են :

Տրուսիոյ եպիսկոպոսաց իրենց կլերին եւ ժողովրդեան  
ուղղած վերջին հովուական թուղթն , Գերբմանիոյ բողոքա-  
կան օրաթերթերու տուիթ տուաւ յոյժ կարեւոր հակա-  
ճառութեան : Որբունին կոչուած բողոքականութեան լրա-  
գիրք՝ այս տութիւ իրենց գրչէն այնտիսի խոսոովանու-  
թիւններ փախուցին , որ զանոնք հաւաքելով մերը ընթերցո-  
ղաց ներկայացնելը անօգուտ չենք համարիր : Ահաւասիկ  
այս խնդրոյ նկատմամբ իրենց քարոզչաց եւ հովուաց բե-  
րանն եղալ Ռէյխսապօր օրաթերթին գրածը . «Մեր եկեղեցին  
կ'ըսէ , իւր պատմութեան տագնասլալից վտանգաւոր ճգնա-  
ժամկին հասած է , այնպէս որ ամեն բանէ առաջ նա ինքն  
իրեն հարցնելու է թէ կարո՞ղ է արդեօք իւր կազմակեր-  
պութեամբն պաշտպանել ամենուրեք զձշմարտութիւնն :  
Միթէ կրնա՞մք հաստատական պատասխան մը տուլ այս հար-  
ցին : Ո՛չ , չեմք կրնար : Բողոյական եկեղեցին կը լուծուի  
ինչն իր մէջ մի եւ նոյն երկրայուրեան ոգուվ՝ որուն դէմ  
պէտք էր որ ոզորէր աշխարհի մէջ : Աւետարանական գործոց  
հանդէպ՝ որոնց վրայ հաստատեալ է եկեղեցին , տառուա-  
ծաբանական գիտութեան մի մեծ մասը կերպապէս մերժ-  
ման կամ սկեպտական այնպիսի դիրք մը կը բռնէ որ բնա-  
պաշտից վարդապետութեան հաւասար է , որուն դէմ պէտք  
էր որ մաքսուէր :

«Արդի աւետարանական եկեղեցին՝ Տէրութեան մը կամ  
ո՛ եւ կ լնիիրութեան մը ունեցած զոյտորիւնն անզամ չու-  
նի : Ո՛չ կամք , եւ ո՛չ խոկ կազմակերպութիւն ունենալուն  
պատճառաւ՝ մէծագործութիւն մը կատարելու բոլորովին  
անյաջող ելած է . եւ ո՛չ այլ ինչ է եթէ ո՛չ Տէրութեան  
մակարոյծ մի տարր» : Այսպիսի նշանաւոր խոսոովանութե-  
նէ մը յետոյ՝ Ռէյխսապօր լրագիրն բարձրածայն կը խնդրէ ե-

պիսկոպոսութեան վերահաստատումը : Բայց «Եպիսկոպոս» բառը գործածելու կը սոսկայ , ինչու որ այս անուանուկոչութեան իւրայնոց քով անժողովրդականութենէն կը վախճայ : Եպիսկոպոսն , ըստ իւր կարծեաց , ընդհանուր վերակացուի , (?) անունը կրելու է , բայց նորա պաշտօնն ու իշխանութիւնն ուղղափառ եպիսկոպոսի պաշտօնէն եւ . իշխանութենէն վերջապէս տարրեր ըլլալու չէ :

Ուկյանապօք լրագրին այս պարզած տեսութեանն արձագանգ եղան գերմանական բոլոր Ուրբունիս թերթեր՝ որք ըսկան ձշմորիս խաչակրութիւն մը քարոզել ի նպաստ այնր զոր կոչէն «Աղասութիւն աւետարանական եկեղեցւոյ» : Զօջ՝ բողոքական մի թերթ , իւր գրած երկար մի յօդուածներով կը բազոքէ այն գերութեան եւ ծառայութեան գէմ որ կը ծանրանայ այժմ բողոքական եկեղեցւոյն վրայ : Բառ իրաւանց , կ'ըսէ վիրոյիշեալ թերթն , Կայսրն կրօնքի գերագոյն պետն է . իսկ , արդեամբք , առհմանադրական վարչութեան հաստատուելէն ի վեր , կրօնից նախարարն է գերիշխան տէր , որոյ քրիստոն այ կամ անհաստուած ըլլալոն իսկ մտադրութիւն չըլլար : Նոյն իսկ Օպերգերխներար , որ բողոքականութեան ամենուերեւելի կրօնական իշխանութիւնը կը ներկայացնէ , ամեն արտաքին գործոց համար կախում ունի կրօնից նախարարէն , այնով՝ որ նախարարն՝ նոյն նախարարութեան ժողովոյ սրոշողութեանց հակառակ իսկ իւր ուղածը ընել տալու իրուունքն ունի :

Եկեղեցտկան նուիրապետութեան վերահաստատումը խնդրողն միայն Ուկյանապօք լրագիրն չէ , այլ Քիրլիկ-Մօնասգրիֆթ , մի ուրիշ բողոքական կրօնական թերթն յայտնապէս կ'առաջարիէ զայն . եւ կ'ուղէ որ գէթ 400 եկեղեցականի գլուխ եպիսկոպոս մը դրուի : Ահաւասիկ մի վկայութիւն զոր այս լուտերական օրաթերթն կու տայ յանգէտըս՝ ի նալաստ Աւղղափառ եկեղեցւոյ : «Մեր եկեղեցւոյ կացութիւնն , կ'ըսէ սոյն թերթ , որչափ աւելի նման ըլլայ նախանական քրիստոնեայ կացութեան , այնչափ աւելի պէտք է որ աչաց առջեւ ունեցուի այն միջոցները զոր գործած է հեթանոսութեան գէմ կենալու համար : Եորա գլխաւոր միջոյն ու հնարքը հաւատքն էր անշուշտ , բայց եկեղեցին բուն եկեղեցի ընողն զիսաւորապէս բիշտոնեայ եպիսկոպոսն եր» :

Այսպիսի խոստովանութիւններ մեկնութեան կարօա  
չեն։ Գերմանական բողոքանութիւնն կրնայ այսօր տեսնել  
թէ Կաթողիկէ եկեղեցին՝ տէրութեանց կրօնական բաներու  
միջամտութեանցը դէմ հակառակելով՝ ո՞րչափ խմասու-  
թեամբ գործած կը լինի բողոքականութիւնն՝ որ Քուրյուր-  
յամիթի, (Կաթուղիկէ եկեղեցւոյ դէմ ի Գերմանիա վերջերս  
եղած հալոծանքը), այնքան ծափակարած էր, հիմայ յուսա-  
հատական ճիգեր կ'ընէ քաղաքական իշխանութեան հարո-  
տահարիչ եւ ջլատիչ խնամակալութենէն աղոտելու համար։  
Բայց կարի երկրայտական է որ կարենայ յաջողիւ վասն զի  
քաղաքական եւ եկեղեցական ըրջունակաց մէջ տիրող ոգւոյն  
նայելով՝ անհնարին է որ Ծիյաստօր լրագրին երազած բա-  
րենորոգումն աեզրի անենայ։ Ուրեմն բողոքականութիւնն  
իւր աղէտաւոր ըրջափոխութեանց մինչեւ ծայրը ընթանա-  
լու գատառաբառուած է։ Եւ վերջապէս՝ գործնական ան-  
տարբերութեան եւ վարդապետական ոչնչականութեան մէջ  
կատարելապէս պիտի փճանայ։

Այժմ յայտ յանդիման կ'երեւի թէ մեր բաժանեալ եղ-  
բարքն բողոքականք սկսած են հացամամիւ նկատել կաթողի-  
կէ նուիրապետութեան զօրաւոր եւ չքեզ կաղմութիւնը։  
Բողոքական ազգային եկեղեցեաց ընդհանրապէս քայքայ-  
ուելուն ժամանակ, Հառվիչական եկեղեցին երթալով պիտի  
երեւի իրրեւ վերջին եւ անմարտնչելի պարիսազ եւ իրը ա-  
մենէն ապահով տպաւէն քրիստոնէական եւ կրօնական գա-  
ղափարաց պահապանութեանը համար։ Ուստի Կաթուղիկէ  
եկեղեցւոյ դէմ յարձակիլը՝ կրօնական խզի անբանապարե-  
լի իրաւանց դէմ ո՞նիր մի է։ բուն ընկերական եղեւն մի է։  
քաղաքակալութեան դէմ քրիական յանցանք մի է։

ՅՈՎԱՆՆԵՍ ՎԱՐԴԱՄԵՏ ԲՈԼԱԴԵԱՆ

## ՄԱՆՐԱԼՈՒՐՔ

ՆՈՐ ԵԽ ԱՆՌՈՒԹ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆ ՄԻ  
Հոնկ-Բոնկի բողոքական եպիսկոպոսն նոր վարդապե-  
տութիւն մի հնարած է, որ կրնայ ըստիւ տեղւոյն յատուկ

նորաձեւութիւն (mode)։ Այն մարդն Շրջաբերական նամակ մի հրատարակեց «ապացուցելու» համար, թէ՛ Տէրն մեր Յիսուս Քրիստոս ընթրեաց մէջ ամենազարդ եւ հասարակ բերքեր ընտրած էր, այսինքն հացը եւ գինին, վասն զի ցորեանն եւ որթն առատ են ի Պաղեստին։ «Բայց, յաւելու ասել, որ եթէ ի ծինաստան գտնուէր, գինւոյ տեղ անտարակոյս թէյը (չայ) պիտի գործածէր։ Ուստի, այսուհետեւ այս ձենական ըմպելին պիտի գործածեմք յընթրիս, եւ այլեւո գինւոյ պէտք պիտի չունենամք։» — Այդ բողոքական եպիսկոպոսն նորահնար վարդապետութեան յարմարելու համար՝ հարկ պիտի լինի զի, եթէ յԱնգլիա գտնուի՝ ճին, յիրլանտա՝ ուխտի, ի Գերմանիա՝ գարէջուր, ի Ռուսաստան՝ վօթգա, ի Կ. Պոլիա՝ օղի, յԱլանիա (Արհանվութ-լուգ) Պօչա կամ Հարուալ շէրպէթի գործածէ……

### ԲՈՂՈՔՈՒԿԱՆՈՒԹԻՒՆՆ Ի ՀՆԴԻԿԱ

Թապլէթ (Tablet) լրագիրն հետեւեալ հատուածը հրատարակած է։

«Բողոքական քարոզիչք 1889 տարւոյ մէջ Հարաւային եւ Հիւսիսային Հնդկաստանի 220,000,000 ընակչաց մէջէն՝ 297 անձինք ի բողոքականութիւն գարձուցած են։ Այս թիւնց կարի միաթարական համարեալ նպատակին հաննելու համար, Ս. Գրոց ընկերութիւնք, նոյն վերոյիշեալ տարւոյ մէջ, 841 քարոզիչք գործածած, եւ 48,296 անգլիական ուկի, այսինքն, 1,207,000 ֆրանք ծախած են։ Հարիւր եւ ինն բողոքական քարոզիչք կան ի Պարսկաստան եւ յԵգիպտոս։ Բոլոր 1888 տարւոյ շրջանին մէջ ի Հնդիկս մի աղջիկ գարձուցած են ի բողոքականութիւնն։ Այս գարձն բազմաթիւ պաշտօնէից տարեկան աշխատութիւնը ներկայացունէ, որոց համար 12,000 անգլիական ուկւոյ գումար ծախուած է, այսինքն, 300,000 ֆրանք։ Այսիսի սիրելի հոգի մի հար՛էր զի գէթ ջերմեռանդն լինէր, այլ «Հաստատեալ Եկեղեցւոյ» նախանձայոյդ պաշտօնեայք ցաւօք խոստովանին թէ նո յարատեւ առաջնորդութեան պէտք ունի,

# ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

## Ա. Ռ Զ Ե Ռ Ն Բ Ա Ռ Ա Գ Ի Ր Ք

ՀԱՅԵՐԻՆ ԼԱՏԻՆԵՐԻՆ

Դ Պ Ե Տ Ս Դ Պ Ր Ո Յ Ա Ց

Ա Շ Խ Ա Տ Ա Ս Ի Ր Ե Ա Ց

### Տ. Յ Ո Վ Հ Ա Ն Ն Է Ս Վ. Մ Ի Ս Ք Ճ Ե Ա Ն

Ուսուցիչ Հայերէն լեզուի յուրբանեան Դպրոցի եւ  
ի Հռովմէական Կղերանցի

Ի ՀՅՈՎՄ ի բազմազեզուեան Տպարանի Ս. Ժողովոյ Տարածման Հաւատոյ

Այս դասագիրքը՝ ինչպէս իւր տիտղոսէն կ'երեւի՝ առանձին յօրինեալ է եկեղեցական դպրոցոց համար, յոր միջեւ ցարդ կր պակսէր այսպիսի օգտագործ մատեն մը Ամեն. Գերեզ. Հոգեւոր Տէր տայն Երկասփոռութիւնը բարեհանած է դրուտելու հետեւալ խօսերով. «Ե Բառազիրսոյ ոչ միայն նշմարեցին հայերէն լեզուին բնիք բառ ից եւ ասացուածոց նոխութիւն» բաղիւլ ի մատենա բաց ոսկելին դարու մեռյ, այլ եւ ուրիշ բազմաքիւ անուանն միշին դարու հեղինակներէն զուծածուած իրենց յատուկ նշանակութեամբը»: — Խոկ Արհի. Գեր. Ցովսէկ Վ. Ֆեանեան, Եպիսկոպոս Տիգրանակերսի, այսպէս կր գրէ իւր համակին մէջ. «Այդպիսի Բառարան այդքան նոխութեամբ բառից եւ ասացուածոց չէ ցարդ ի լրաց ընծայեալ» եւ կ'աւելցրնէ, թէ «մեծ սատար բնածոյէ առակերտաց, որ զլատին բարբառ ուսանիցին». Այս կրկին մեծարոյ համակներն իրենց ամբողջութեամբը դրուած են ի զրութի լիւեալ բառազրոց. ուր եւս կայ փոքրիկ Քերականութիւն մը հայերէն լեզուի, հանդերձ համարական տախտակօֆ կանոնաւոր եւ անկանոն բայից, եւ համառօս ներականական ծանօթութիւններ.

Վերոյիշեալ Գրին զինն է 15 թրամի, եւ կր վաճառուի Ս. Ժողովոյ Տարածման Հաւատոյ բազմալեզուեան գրասունը.

Պատկեր տասնեւինգ օր մի անգամ կը հրատարակուի :  
Բաժանորդագրութեան տարեկան զիցն է Կ. Պօլսոյ համար 40 դահեկան , խսկ գաւառաց եւ օսար Երկիրներու համար 50 դահեկան , բրատարի ծախքը ի միասին հաշուելով :

Երաժանչիր թիւ 2 դահեկան է :

Պատկերի խմբագրատունն է ի Բերա , Եկեղի փողոց ,  
Թիւ 1 , ուր պէտք է դիմել բաժանորդագրութեան եւ բերքին  
վերաբերալ այլ ամենայն խնդրոց համար :